ՉԱՓԱՆԻՇ

CRITERION

Աշոտ Աշոտ
Achot Achot

Մ. կարո
M.Karo

Նարեկ Ավետիսյան
Narek Avetisyan

Խմբագրական խոսք

2022 թվականի նոյեմբերի 25-ին Գաֆեսճեան արվեստի կենտրոնում բացվեց «Կարեն Պետրոսյան. սկիզբ, վերջ, սկիզբ» ցուցադրությունը:

Հարիւր 45 բազմաբնույթ և բազմաշերտ ստեղծագործություններում արվեստագետը ներկայացնում է մարդ-բնություն հարաբերությունը և փոխազդեցությունը: Պատկերելով մարդու սկիզբն ու վերջը տեսանելի տիեզերքում՝ նա ազդարարում է մեկ այլ նոր սկզբի մասին: Ընդ որում, Կարեն Պետրոսյանի պատկերագրությունը հագեցած է նաև վերացական մատրիցաներով և տիեզերական ֆորմաներով՝ արտահայտված կենսաբանական տարածության մեջ:

Կարեն Պետրոսյանը զարգացնում է մարդու մեկ վիճակից մյուսի անցման և փոխակերպման գաղափարը, որը ենթադրելով իր ներաշխարհում՝ ի վերջո արտահայտություն է գտնում արվեստագետի աշխատանքներում և այցելուներին ստիպում մտորել դրա շուրջ:

Բախտարին իր առաքելությանը՝ Գաֆեսճեան արվեստի կենտրոնը շարունակում է ժամանակակից արվեստի առաջատար միտումները ներկայացնել Հայաստանում, ինչպես նաև աշխարհին ներկայացնել հայկական մշակույթի խավագույնը:

Բաստուկ շնորհակալություն ենք հայտնում արվեստագետ Կարեն Պետրոսյանին:

Ցուցադրության կազմակերպման և իրականացման համար իմ շնորհակալությունն եմ հայտնում Գաֆեսճեան արվեստի կենտրոնի անձնակազմին, ում նվիրումի և ջանքերի շնորհիվ Կենտրոնը շարունակում է կյանքի կոչել Գաֆեսճեան ժառանգության տեսլականը Հայաստանում:

Վահագն Մարաբյան
Գործադիր տնօրեն
Գաֆեսճեան արվեստի կենտրոն

Չափանիշ

Ի՞նչ ասել է թե «չափանիշ»: Ի՞նչ է նշանակում որոշել որևէ բանի չափը կամ ունենալ չափման հստակ նիշ: Եվ ի՞նչ է պատահում, երբ այն, ինչի չափը փորձում ենք որոշել, չափման ենթակա չէ:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնում Աշոտ Աշոտի, Մ.Կարոյի և Նարեկ Ավետիսյանի կողմից նախաձեռնած «Չափանիշ» ցուցադրությունը նրանց ստեղծագործական նկրտումների գեղարվեստական մանիֆեստն է՝ հիմնված վերնագրում արտացոլված գաղափարի վրա:

Չափանիշը որևէ երևույթի բացարձակ վիճակն է, ըստ որի որոշվում է այս կամ այն բանի լինելը՝ այդ բացարձակի նկատմամբ հարաբերությամբ: Մարդկությունը չափանիշներ սահմանելու հակում ունի, չնայած տարբեր չափանիշների վերաբերյալ պատկերացումները հաճախ չեն համընկնում: Այդ առումով «չափանիշ» բառի հետ երեք արվեստագետների հարաբերությունները, տարբեր լինելով հանդերձ, ունեն որոշակի հատման կետեր, որոնք արտացոլվում են ոչ միայն տեսողական լեզվում, այլև ստեղծագործությունների հոգևոր և գաղափարական հղացքներում:

Ժամանակակից արվեստի հիմքում գտնվող արվեստի հայցադրումը ենթադրում է, որ գոյություն ունի որոշակի չափանիշ, որի հիման վրա հնարավոր է ընկալել՝ արդյոք որևէ բան արվեստ է, թե ոչ: Այդուհանդերձ, պետք չէ այս ցուցադրության մեջ փնտրել միայն արվեստի մասին հեղինակների չափանիշային պատկերացումները, քանզի նախագիծը «չափանիշ» ֆենոմենի ավելի լայն ընկալմանն է ուղղված: Այն Աստծո, հոգու, սիրո, արվեստի և վերջապես կյանքի չափանիշների և այդ երևույթների հնարավոր անչափելի լինելու մասին է:

Մենք սովորվածաբար ենք չափանիշներին՝ համեմատելու, դատելու և արժեք սահմանելու համար՝ որոշելու, թե ինչն է իրաստատից, ինչն է գեղեցիկ, ինչն է ճշմարիտ: Սակայն այս չափման ընկալումները ոչ կայուն են, ոչ էլ համընդհանուր: Դրանք մտացածին են, փոփոխական և հաճախ անհամատեղելի:

Այս նախագծում չափանիշը երբեմն հանդես է գալիս որպես չափման ձև, փորձ՝ հաստատելու տեսողական միավորներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ընկալել և համեմատել իրաստը: Մյուս դեպքում այն վերածվում է գոյաբանական կամ տեսաֆիզիկական վիճակի՝ կապված անսահմանության կամ հավերժության մեջ սեփական տեղը սահմանելու հետ: Եվ մեկ այլ դեպքում այն դառնում է խորապես անհատական և հարաբերական՝ ձևավորվելով այն բանի շուրջ, ինչը դժվար է սահմանել կամ համընդհանուր դարձնել:

Ուստի, «Չափանիշ» ցուցադրությունը չի առաջարկում հստակ սահմանում, այլ ձևավորվում է որպես տարբեր ընկալումների համատեղ գոյակցության տարածություն՝ միաժամանակ բացահայտելով տարբեր չափման համակարգերի անհամատեղելիությունը, լինի դա համակարգային, անհատական, թե հոգևոր իրականություններում:

«Չափանիշ» ցուցադրության հիմնական մասը ներկայացված է Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Վրթիվե սրահում, սակայն հեղինակների ասելիքը յուրահատուկ ձևով ու բացարձակ նոր շերտերով բացահայտվում է նաև Կենտրոնի «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահում և Ցուցասրահ Մեկում՝ այլ մոլտիմեդիաների միջոցով:

Արմեն Եսայանց
Արվեստագիտության թեկնածու
Ցուցադրությունների գծով տնօրեն
ԳԱԿ

ATMA
ADVAYTA
EKATVA

BHAGAVATA-TATTVA
SWARUPA SHAKTI
ISHVARA-PARAMA-KRISHNA
SAT-CHIT-ANANDA-VIGRAHA
ANADIR-ADIR-GOVINDA
SARVA-KARANA-KARANAM
(MUKTI)
BHAKTI
MAYA-HIKYA
YOGA-MAYA
RADHA-KRISHNA
VISHESA